Արձանագրություն N 4
ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 23 հոկտեմբերի 2023թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սիմոնյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Ս. Ասրյանը, Ս. Նազարյանը, Ս. Ալեքսանյանը և Լ. Գալֆայանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը:

Մասնակից ընկերությունների կողմից ներկայացված շտկման փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար հոսքաչափերի և մակարդակաչափերի ձեռքբերման ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «ՍԼԱԲ» ՍՊԸ-ն, «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն, «ԱՐՄ-ՌՈՒՍ ԱԼԿՈ» ՍՊԸ-ն, «Պարագիծ» ՍՊԸ-ն և Հայ-գերմանական «Արազեն» ՀՁ ՍՊԸ-ն՝ սահմանված ժամկետում ներկայացրել են գնահատող հանձնաժողովի 18.10.2023թ. թիվ 3 որոշմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ փաստաթղթեր: Ներկայացված փաստաթղթերով մասնակից «Պարագիծ» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունը:

Մասնակից Հայ-գերմանական «Արազեն» ՀՁ ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացված փաստաթղթերով չի շտկվել՝ հրավերի պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի տեխնիկական բնութագրով պահանջվող՝ առաջարկվող մակարդակաչափի ջրակայունության մասին տեղեկատվությունը (ընկերության կոմից առաջարկվող սարքը ջրակայուն չէ): Միաժամանակ Հայ-գերմանական «Արազեն» ՀՁ ՍՊԸ-ի կողմից շտկմամբ ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որը չի համապատասխանում ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով հրավերի 8.18 կետի պահանջներին (Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ):

Մասնակից «ԱՐՄ-ՌՈՒՍ ԱԼԿՈ» ՍՊԸ-ի շտկմամբ ներկայացված փաստաթղթերում 1-ին չափաբաժնի համար ներկայացված մակարդակաչափի տեխնիկական անձնագրում բացակայում են հրավերի պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի տեխնիկական բնութագրով պահանջվող տեղեկատվությունը, մասնավորապես՝ ջրակայունության, արևային պանելից լիցքավորվելու հնարավություն ունեցող մարտկոցի առկայության, ճշգրիտ աշխատանքի ջերմաստիճանային միջակայքի և ծավալի հարաբերական չափման տոկոսային սխալի վերաբերյալ

տեղեկությունները: Միաժամանակ ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որը չի համապատասխանում ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով հրավերի 8.18 կետի պահանջներին:

Մասնակից «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի 4-րդ չափաբաժնի համար շտկմամբ ներկայացված սարքի մոդելը չի համապատասխանում հայտով ներկայացված Հավելված 1.1-ով առաջարկվող սարքի մոդելին: Միաժամանակ ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որը չի համապատասխանում ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով հրավերի 8.18 կետի պահանջներին:

Մասնակից «ՍԼԱԲ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի համաձայն շտկվել է գնահատող հանձնաժողովի 18.10.2023թ. թիվ 3 որոշմամբ արձանագրված 1-ին չափաբաժնի մասով անհամապատասխանությունները և ներկայացված բոլոր փաստաթղթերը հաստատվել են էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Սակայն «ՍԼԱԲ» ՍՊԸ-ի կողմից շտկմամբ ներկայացված 5-րդ չափաբաժնի համար առաջարկվող հոսքաչափի տեխնիկական անձնագրում՝ կրկին բացակայում է հոսքաչափի ճշգրիտ աշխատանքի ջերմաստիճանային միջակայքը:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված (այդ թվում շտկմամբ) փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով հրավերի 8.10 կետը մերժել ընթացակարգի մասնակիցներ Հայ-գերմանական «Արազեն» ՀՁ ՍՊԸ-ի 1-ին չափաբաժնի, «ՍԼԱԲ» ՍՊԸ-ի 5-րդ չափաբաժնի, «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների, «ԱՐՄ-ՌՈՒՍ ԱԼԿՈ» ՍՊԸ-ի 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների հայտերը,

2. ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի ընտրված մասնակից հայտարարել **«ՍԼԱԲ» ՍՊԸ-ին**, 2-րդ և 5-րդ չափաբաժինների ընտրված մասնակից՝ **«ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ին**, 3-րդ և 4-րդ չափաբաժինների ընտրված մասնակից՝ **«Պարագիծ» ՍՊԸ**-ին:

3. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով ընթացակարգի 1-5 չափաբաժինների համար անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ «ՍԼԱԲ» ՍՊԸ-ին, «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ին և «Պարագիծ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Ա. Սիմոնյան
անդամներ	_____	Ս. Ասրյան
	_____	Ս. Նազարյան
	_____	Ս. Ալեքսանյան
	_____	Լ. Գալֆայան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան